

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՃԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՍԵՂԱՆԻ
ԹԵՆԻՍԻ ԹԻՄԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԳԱՎԱԹԻՆ
ԱՐԺԱՆԱՑԱՎ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՄԸ**

2016թ. փետրվարի 20-ին «Դինամո» մարզադահլիճում կայացավ սեղանի թենիսի թիմային առաջնություն Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության անդամ կազմակերպությունների միջև:

Միջոցառումն անցկացվում էր արհմիության երիտասարդական թևի նախաձեռնությամբ և նվիրված էր Հայաստանի պետական հիմնարկների արհմիության 85-րդ ամյակին:

Մասնակից թիմերն էին ճյուղային արհմիության անդամ կազմակերպություններից 13-ի՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական ծառայության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, Երևանի քաղաքապետարանի, Շենգավիթ, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի պատմության թանգարանի, «ՀՀ բժշկասոցիալական փորձաքննություն» գործակալության, Խարբերդի մասնագիտացված մանկատան, Աշտարակի տարածքի պետհիմնարկների արհմիությունների թիմերը:

Ճյուղային արհմիության գավաթին արժանացավ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության թիմը, երկրորդ տեղը զբաղեցրեց ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիմը, երրորդ տեղը՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության թիմը:



Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության կազմակերպած սեղանի թենիսի թիմային առաջնության մասնակիցները



ՀՀ ազգային վիճակագրական ծառայության թիմը